

Ս. ՔՈՂԱՆԶՑԱՆ

ՄԵՐ ԶԵՌԱԳՐԱԿԱՆ ԿՈՌՈՒՏԱՑՆԵՐԸ *

Անկյուրիա. — Զեռագրերով հարուստ էր Գաղատիայի հայությունը: 20-րդ դարի սկզբին հայերեն ձեռագրերը մեծ մասսամբ կենտրոնացված էին Կարմիր վանքում:

1915 թվականի ապրիլի 30-ին էր, աքսորական հայ մտավորականների մի խումբ, որ ճանապարհ էր հանված Կոստանդնուպոլիսից, մի պահ էր հանգրվանն էր գտել Անկյուրիայի ս. Աստվածածնի վանքում, որ նույն օրը տեղի հայ գաղութին նշելու էր Համբարձման տոնը: Այդ օրը Անկյուրիայի հայության տոների տոնն էր, քանի որ երգելու էր աքսորականների խմբին մաս կազմող՝ Կոմիտաս վարդապետը: Ինչպես նկարագրում է իր հուշերում, հայտնի հրապարակագիր Բյուզանդ Քելյանը, Կոմիտասին լսելու համար եկել էին նույնիսկ օտարներ: Հայ մտավորականների խումբը, նույն օրն իսկ Անկյուրիայի հայությանը հրաժեշտ տալուց առաջ, շմոռացավ աշք անցնելու Շափառիով վերջին հայ առաջնորդին՝ Կյուլսենյան Բարդեն եպիսկոպոսին՝ մեծ խնամքով կարգի դրած, նոթագրած և երկաթյա սնդուկներու մեջ պահած կարգ մը շատ հին ձեռագիրները»¹⁸⁷:

Մեր ժողովուրդի շողջողուն աստղերը

հանդիսացող աքսորական մտավորականներն անգամ այդ դժնդակ օրերին շմոռացան ըմբռշանելու հայերեն հնագույն ձեռագրերի հմայքը և անխախտ հավատքով դեպի հայության ապագան մեկնեցին իրենց վերջին համբուլը դրոշմելով հայ հանճարի արգասիքը հանդիսացող այդ նշանաբներին: Ո՞վ դիտե ինչքան էր հմայված այդ վսիմ պահին Կոմիտասի հոգին, ի տես ձեռագրերում ցանցնված խաղերին, և որոնց համբ լեզուն ինք խոստացել էր շուտով բացել, այդպիսով փարատելու համար դարերի մշուշը ու համառորեն քարացած մնացած գաղտնիքը, եթե վերագտներ միայն երեքմնի իր անդորրը...

Ու քարավանը շարժվեց... և քերին միայն բախտ վիճակվեց վերադառնալ սպանդից, այդ քերի հետ էր նաև Կոմիտասը, սակայն ինչ փուլթ, նա թեև կար, սակայն վեր էր ածվել կենդանի դիակի...

Հայ աքսորականների խմբին նման դժնեմ ճակատագիր վիճակվեց նաև Անկյուրիայի հայերեն գրչագրերին, այն տարբերությամբ միայն, որ նրանցից և ոչ մի ձեռագիր հնարավոր չեղավ ցարդ փրկել...

Մենք հիշատակություն ունենք այն մասին, որ Անկյուրիայի ձեռագրերի մի մասը անցյալում, այսինքն նախքան Բարդեն

* Շարունակված «էջմիածին» ամսագրի 1965 թվականի № Թ-Գ-Դ-ից, Ե-Զ-Է-ից և 1966 թվականի № Է-Թ-Ժ-ից:

187 Թեսովիկ, Ամենուն տարեցուց, ԺԶ տարի, 1922, է. Պոլիս, էջ 44:

արքեպ.-ի կողմից ցուցակագրվելը, փրկվել էր վատթար վիճակից և ձեռնարկվել նրանց ցուցակագրմանը: Ինչպես երեսմ է մի հիշատակագրությունից գրված 1899 թվականի հոկտեմբերի 5-ին, Ստեփան Մխիթարյան անունով մի անձ շուրջ 60 ձեռագրեր էր հանել տվել մեծ դժվարությամբ Անկյուրիայի ս. Նշան եկեղեցու զանձարանից: Գեռագրերը մինչ այդ պահվում էին «աղտոտ և վրան բաց ու ծթուած սնտուկի մը մեջ, ուր լիսկելու աստիճան խոնավութենի և ճճիներու ոստայնեն բորբոսա» էին: «Հանել զինի ձեռնարկեցի զանոնք մեկիկ մեկիկ ցուցակագրել խոպան կորնչելի ազատելու»¹⁸⁸ համար, գրում է նույն Ստ. Մխիթարյանը:

Անշուշտ նույն անձն է, որ դեռ 1900 թ. Կ. Պոլսի «Բիւրակն» հանգեսում Ս. Մ. Ակզրնատառերով (իմա Ստեփան Մխիթարյան) հրատարակել է «Հնկյուրիի հայ. ձեռագիրներ»¹⁸⁹ խորագրով մի հոգված, ուր դարձյալ խոսում է 60 ձեռագրերի փրկության մասին: Նա ի մեջ այլոց զրել է հետեւյալը. «... Շատ արգահատելի վիճակի մը մեջ գտանք 60 օրինակ ձեռագիրներ, բոլորը եկեղեցական մատյաններ են որոնց աղտոն ու փոշին մաքրել վերջ, ցուցակագրած եմ Վիեննական հայրերու և Տ. Տրդատ եպս. Պալյանի կողմին ցուցակագրման համաձայն»: Հոգվածագիրը շարունակության մեջ խոստանում է հետագայում նույն «Բիւրակն»-ում հրատարակելու ամբողջ ցուցակը, մինչ այդ նա հրատարակում է այն համառոտ կերպով և նկարագրում միայն 15 ձեռագրեր, որոնց մեծ մասը գտանք նկարագրված ընդարձակորեն կյուկեսերյան ցուցակում: Ինչ վերաբերում է մնացած 45 գրչագրերի համառոտ ցուցակին և կամ խոստացված ընդարձակ ցուցակին, մենք չկարողացանք գտնել «Բիւրակն»-ի հաշորդ համարներում:

Բարգեն արքեպ. Կյուկեսերյանը իր կազմած Անկյուրիայի ձեռագրացուցակում գրել է, որ 1910 թվականին ս. Նշան եկեղեցուց ձեռագրեր է տեղափոխել Կարմիր վանքի մատենադարանը: Դարձյալ հիշյալ ցուցակում, կազմողի կողմից արված նշումներից երեսմ է, որ ս. Նշան եկեղեցուն պատկանող գրչագրներից շուրջ 55 թիվը եղել է ձեռագիր:

Սակայն, Անկյուրիայի կորած մեր ձեռագրի ժառանգության համար մեծ բարեբախտություն եղավ այն, որ Բարգեն աթոռակից կաթողիկոս Կյուկեսերյանը դեռևս Գաղատիայի թեմի իր առաջնորդության ընթաց-

քում (1909—1913 թթ.) հատուկ խնամքով կազմել էր Անկյուրիայի Կարմիր վանքի և նրա՝ շրջականիրում գտնվող 323 հայերեն ձեռագրերի գիտական ցուցակը:

Սակայն բավական չէր միայն ցուցակագրելը, անհրաժեշտ էր մանավանդ փրկել այդ ձեռագրացուցակը, չէ որ մի շարք վայրերում ոչնչացան ոչ միայն ձեռագրերը, այլև նրանց ցուցակները: Դիպվածի բերումով է, որ փրկվեց Բարգեն Կյուկեսերյանի կյանքը: 1913 թ. աշնանը Կյուկեսերյանը իրեն հանձնարարված պարտականությունը կատարելու ճանապարհին, գալով իր ծննդավայր Այնթապ քաղաքը, իր եղբոր մոտ պահ դրեց իր երկարամյա տքնաշան աշխատանքի արդյունք եղող ձեռագրի աշխատությունները, որոնց մեջ էին գտնվում նաև Անկյուրիայի և Ղալաթիայի ձեռագրացուցակները: Շուտով նրա կյանքը փրկվեց բժշկական գործողության ենթարկվելու, ինչպես նաև պաշտոնով Ամերիկա տեղափոխվելու հետեւանքով:

Սակայն ծանր ողիսական էր վիճակված տեսնելու, ինչպես Կյուկեսերյանի հարազատներին, այնպես էլ Անկյուրիայի ձեռագրացուցակին: Այս առիթով, ի՞նչպես կարելի է շվեյչիթել Կյուկեսերյանի եղբորորդու՝ Վահեն Ն. Կյուկեսերյանի կողմից հիշյալ ձեռագրացուցակի փրկությանը նվիրված ուշագրավ հոգվածը, որի ներկայացրած շահեկանության համար ստորև բերում ենք այն հապավումներով: Վահեն Ն. Կյուկեսերյանը իր եղբայրների հետ երկար դժվարությունների հաղթահարելուց հետո, կարողացել է աղատել իր հորեղբոր գործերը և իր ու հարազատների անունը կապել մեր նորագույն ձեռագրերի փրկողների պատմության հետ:

Ինչպես նշվեց, Բարգեն եպիսկոպոս Կյուկեսերյանը, Անկյուրիայից Այնթապ գալով, իր ներսես եղբոր տանը թողել էր միշակ մեծություն ունեցող շորս սննդուկ գործերը՝ տպագիր և ձեռագիր: Նրա արտասահման մեկնելուց հետո, 1915 թ. Հովհանն սկսվեց Այնթապի հայության տարագրությունը: Տարագրվողներից ոմանք իրենց ունեցվածքը և գրքերը սնդուկների մեջ զնելով հանձնում էին ի պահ Ամերիկյան կենտրոնական կությի և ս. Աստվածածին եկեղեցու ղեկավարությանը: Սրբազնի հարազատները ի վերջո որոշեցին վերջինիս սնդուկները տանել և պահել ս. Աստվածածինի ավագ խորանի հետեւում գտնվող գետնափոր մի թաքստոցը, և որը եկեղեցու պաշտոնյաների կողմից համարվում էր անմատչելի և նրանց ասելով՝ սատանան իսկ այն գտնելու հնարազորություն շունեցող մի վայրը: Զնայած հիշյալ սնդուկները սրբազնի հարազատները նա-

¹⁸⁸ Բարգեն արքունիկից կարողիկոս, նշված աշխատությունը, էջ 870—872:

¹⁸⁹ «Բիւրակն», 1900 թ., № 7, էջ 101—103:

խապես մի տեղում թաղել էին, սակայն այն ապահով չամարելով, նրա երեք եղբորորդիները շուտափույթ կերպով տարել ու իջցրել էին վերոհիշյալ ապահով համարված վայրը:

Սակայն շատ շուտով սրբազնի եղբայրը իրեկ պղնձագործ իր ընտանիքով տարագրությունից ազատվելով, որոշում է եկեղեցում թաքցրած հիշյալ սնդուկները տուն բերել: Գնալով եկեղեցի, պարզվում է, որ թուրք պաշտոնյաները անմատչելի համարված վերոհիշյալ վայրից, ամեն ինչ դուրս էին բերել և չորս կողմ սփռելով զբաղվում էին նրանց ցուցակագրման աշխատանքներով: Վահեն, որը եկեղեցի էր եկել իր հորեղբոր սնդուկները գտնելու հույսով, սահմոկում է ի տես այդ տեսարանին: Վերջինս երբ սարկավագի կողմից թուրքերին զովացուցիլ օշարակ բերելու ուղարկվեց, վերադարձին նրան կարգադրվեց սնդուկները տանել ավանդատուն և նա հնարավորություն ունեցավ դրանք զետեղել ու արդեն իսկ այստեղ լցված հարյուրավոր սնդուկների միջև, իրարից անշատ: Աշխատանքներից հետո բահանան և սարկավագը եկեղեցու դուռը կողակելով բանալին հանձնեցին թուրք պաշտոնյաներին և փոխարքեն ստացան ստորագրված թղթի մի կտոր:

Երեք օր հետո, բոլոր սնդուկները և կապոցները թուրքերի կողմից աճուրդի էին հանված, իսկ հայերին արգելված էր այստեղ մոտենալը: Միակ հույսը մնում էր հասկացվել շենքի գիշերային պահապան նշանակված թուրք ծերուկի հետ: Շուտափույթ կերպով Կուլիսերյան եղբայրները որոշում են այդ գիշերն իսկ պահապանի մոտ ուղարկել իրենց ամենակրտսեր եղբոր՝ 16-ամյա Բարգենին: Վերջինս նույն երեկոյան մոտենալով պահապանին ասում է:

«Ալա, մենք նպարավաճառի խանութ մը ունինք և թուղթի պակաս, կուտես քեզի քանի մը զրուց տամ և ներս մտնելով մաս մը թուղթ առնեմ»: Եվ պահապանի պատասխանը առանց սպասելու նա ասաց. «Առ սա փաքեթ մը ծխախոտն ու դրամը»:

«Այս դրամը թիւ է, շատ չ'առնես հա՛ պատվիրելով՝ բարի կըլլա դուռը բանալ ու ներս անցնել թարգենը»: Վերջինս իրեն բացարված տեղում գտնում է ձեռագրերի սնդուկը և պարունակությունը տոպարակի մեջ դնելով, դուրս է հանում. և այն ոչ թե ուղղակի տուն է տանում, այլ նախապես որոշվածի համաձայն, թողնում է մի հայ ընտանիքի տունը: Հետեւյալ օրը, Կուլիսերյան ընտանիքի բոլոր անդամների կողմից հնարավոր եղավ ձեռագիրները փոքր ծրարների վերածելով փոխադրել տուն:

Հազիվ մի շաբաթ էր անցել վերոհիշյալ նշանավոր օրից, երբ եկեղեցին դիմուրական կայանի էր վերածվել, իսկ վերոհիշյալ թաքստոցը՝ զուգարանի (ճեմիշի):

Հայորդ 4 տարիների ընթացքում այս ձեռագիրները բազմաթիվ անգամներ թաղվեցին հողի տակ, թաքստոցից թաքստոց տեղափոխվեցին, կասկածանքի ենթարկվեցին և այլն: Պատերազմի ավարտից հետո ձեռագիրներն էլ իրենց թաքստոցներից դուրս հանված էին և օդ ու արև էին տեսնում:

Սակայն 1920 թ. ապրիլին, Այնթապի ինքնապաշտպանության ժամանակ, Կուլիսերյան ընտանիքի անգամները կրկին ստիպվեցին թաղել ձեռագիրները: Քեմալականները երբ 1921 թ. գրավեցին Այնթապը, մնացած բոլոր հայերը որոշեցին թողնել քաղաքը: Ոչնչացումից փրկված ձեռագրերին նոր աղետ էր սպառնում: Այս ապրիլի Վահճ Կյուլիսերյանը պատմում է հետևյալը.

«Աններ ինձի համար ձեռագիրներն էին: Չէի կրնար տոնը ձգել, ատիկա հարյուրին հարյուր կորուստ կնշանակեր. հետո տանին ալ ուներ իր զժվարությունները: Թոնվելու պարագային՝ կոչնշանայինք թիւ մենք և թիւ ձեռագիրները: Երկրորդ միջոցը ձեռագիրներուն համար ավելի ապահով զգալով՝ զանոնք դրի հին երեսով սնդուկի մը հատակը, վրան տախտակ զամեցի ու հին թուղթերով ծածկեցի: Մեր հագուստեղենն ալ զրի տարտրդ: Նած և խառնիխուուն:

Սահմանագլուխի: Խուզարկության վայրը սահմուկեցուցիլ էր: Զինյալ զինվորներու խումբեր ամեն ինչ վար առնել կուտային: Վայրը բաղարի տեղ մը եղած էր. կանչվրատուք, նախատինք, հայշոյություն միայն լսելի էին, կին թիւ այր կիսուզարկվեին անխնա...»:

Թեև պաշտոնյաների գլխավորին հնարավորություն ունեցան կաշառելու, սակայն այդ խստադիմ մարդու գեմքը ավելի և խոժուցավ, և նա հրամայեց, որպեսզի Կուլիսերյանները բաց անեն իրենց բեռները:

«Թարեբախտաբար մարդը շկրցավ զանազանել սնդուկի ներսի խորության տարբերությունը դուրս բարձրության հետ, և թանկագին ձեռագիրները այս անգամ ևս աղատեցավ, զամանք քննիչի մը խստություններին: այլապես մեր մուկը մարած էր և ձեռագիրներն փճացված անպայման:

Օր մը ետք Հալեպ հասած էինք:

1923 թվի սեպտեմբերին, Հորեղբայրս Բարգեն կաթողիկոս Կուլիսերյան—այն ատեն եպիսկոպոս—Հալեպ եկավ Ամերիկային, այն ձեռագիրները, զորս ինքը մեր տունը ձգած էր Այնթապ, ճիշտ տարսը տարիներ ա-

ուաշ, անվլար հանձնեցի իրեն՝ թանկարժեք նվերի մը փոխան»¹⁹⁰:

Այսպիսով Հնարավոր եղավ արյան և մոխրի միջով փրկել մի հարուստ ձեռագրական գանձարանի անգին հաշվեմատյան, և որը ի տարրերություն մեր բաղմաթիվ իսպառ կորայան մատնված գրչության կենտրոնների, կոշված էր հայելին հանդիսանալու Անկյուրիայում մեր երեխն ունեցած ձեռագրական հարստության: Ահա թե ինչու հայ ձեռագրափության մեծանուն վաստակավոր՝ Գարեգին Ա կաթողիկոս Հովսեփյանցը իր կաթողիկոսության օրերին ժամանակավորապես մեկ կողմ թողնելով նույնիսկ իր կոթողական գործերի հրատարակումը, մեծ նախանձախնդրություն էր ցուցաբերել ինչպես Անկյուրիայի, այնպես էլ 1915 թ. արհավիրքներին կորած և ոչնչացած հայերեն ձեռագրերի ցուցակները տպագրության հանձնելու ուղղությամբ: Եվ այսպես, Անկյուրիայի փրկված ձեռագրացուցակը Վեհի կենդանության օրոք արդեն իսկ տպագրվում էր, սակայն այն լուս տեսավ ուշացումով, հաղիվ 1957 թ.: Նրա հրատարակումը կարեռ ավանդ հանդիսացավ ինչպես մեր ձեռագրափության, այնպես էլ մատնագրության և առհասարակ հայագիտության համար:

Այժմ, քանի որ Անկյուրիայում երեխն պահվող մեր ձեռագիր զանձերի արժեքը բացահայտող միակ հավաստի աղբյուրը հանդիսանում է Հիշյալ ձեռագրացուցակը, ուստի անհրաժեշտ ենք գտնում ստորև շատ համառոտ կերպով խոսելու 323 գրչագրեր երեխն բովանդակող այդ հոյակապ հավաքածուի մասին:

Բարգեն աթոռակից կաթողիկոսի «Յուցակ ձեռագրաց Անկյուրիո Կարմիր վանուց և շրջակայից» փրկված գործում կան նկարագրված 323 գրչագրեր, որից 309-ը պահպատ էին Անկյուրիայի Կարմիր վանքում, մեկը՝ անհատի մոտ, իսկ 13-ը՝ հիմնականում Սթանող գյուղի եկեղեցում: Անկյուրիայի ձեռագրերը իրենց հնությամբ մոտավորա-

պես հետեւյալ պատկերն են մեղ ներկայացնում: ԺԱ դարից՝ 1 ձեռագիր, ԺԹ—ԺԴ դարերից՝ 3, ԺԴ դարից՝ 5, ԺԴ դարից՝ 13, ԺԵ դարից՝ 15, ԺԴ դարից՝ 16, ԺԷ դարից՝ 91, ԺՇ դարից՝ 83, և ԺԹ դարից՝ 22. կան նաև բազմաթիվ ձեռագրեր նկարագրված, որոնց ժամանակը ցուցակում չկ նշված:

Ձեռագրերի մեծ մասը գրված է Անկյուրիայում, սակայն կան նաև բազմաթիվ գրչագրեր, որոնք գրվել են Հայաստանում և հայկական մի շարք գաղթավայրերում: Այսպես, էջմիածնում, Կարինում, Բաբերդում, Մեծոփիա վանքում, Սերաստիայում, Ելգոկիայում, Ամսախյում, Կեսարիայում, Ուրֆայում, Թուրմարդում; Պրուսայում, Ղոնիայում, Կուտինայում, Գարաճիսարում, Ամիդում, Սիսում, Դրազարկի և Սկեռայի վանքերում, Ջեյթունում, Լամբրոնում, Սիվրի Հիսարում, Սպարթայում, ինչպես նաև Կոստանդնուպոլսում, Երուսաղեմում, Հալեպում, Կաֆայում, Կամենիցում, Լվովում, Քիլիում և այլ վայրերում:

Անկյուրիայի գրչագրերը իրենց բովանդակությամբ մոտավորապես կարելի է բաժանել հետեւյալ կերպ: Աստվածաշունչ՝ 7 ձեռագիր, Ավետարան՝ 36, Սաղմոսարան՝ 10, Ճաշոց՝ 11, Տոնապատճառ՝ 1, Մաշտոց՝ 29, Գանձարան՝ 10, Ճառնտիր՝ 2, Տաղարան՝ 2, Տոնացույց-Ավետարանացույց՝ 3, Ուկիփորիկ՝ 1, Խորհրդատետր-Պատարագամատույց՝ 7, Ժամագիրք՝ 4, Վարք Սրբոց՝ 2, Հայումավորք՝ 4, Պարզատումար՝ 4, Ժողովածու տարրեր նույթերի՝ 46, Սեկնությունը՝ 35, Քարոզգիրք՝ 39, Շարակնոց՝ 19, Բժշկարան՝ 3, Բառարան՝ 4, Քերականություն՝ 3, Խրատականք՝ 1, Վեց Հազարյակ՝ 1, Աշխարհացույց՝ 2, Կանոնագիրք-Դատաստանագիրք՝ 2, Գրիգոր Նարեկացու «Ողբերգության Մատեան»՝ 2, և այլն, և այլն: Կային նաև հայ բազմաթիվ հեղինակների գործերից, այդ թվում՝ Ն. Շնորհալու «Հիսուս որդին» և «Ողբերգություն», Գրիգոր Տաթևացու քարոզգիրքին ու նրա «Գիրք հարցմանց»-ն, Թովմա Մեծոփիցու պատմությունը և այլն: Հավաքածուից մաս էին կազմել նաև Բարգմանական բազմաթիվ աշխատություններ, այդ թվում՝ Կյուրեղ Երևանաղեմացու, Դիոնիսիոս Արիսպացու, Հովհան Ոսկեբերանի և այլոց գործերը:

Պատկառելի հնություն ունեցող գրչագրերից անհրաժեշտ ենք գտնում Հիշյալ հետեւյալ ձեռագրերը: 1176 թվականին գրված «Հաւաքրումն Մեկնութեանց Եթանեցուց թիթոցն Կաթողիկեաց» գրչագրերը, որը ապահովաբար պատկանում էր սույն գործի թարգմանիչ Ներսես Լամբրոնացու գրչին և

¹⁹⁰ Սույն արժեքավոր նկարագրականը պարունակող վահեն-Ներսես Կյունիսերյանի հոդվածը «Բարզեն Կաթողիկոսի ձեռագրին ներսում անհատացներուն և Անկյուրիայի Կարմիր վանքի ձեռագրաց ցուցակին ապատագրումը» վերհագով, լուս է տեսել Ենեթ Տանն Կիլիկիի Կաթողիկոսության պաշտոնաթերթ «Հասկ» ամսագրի 1951 թվականի № 7-ը-ում՝ 227—229 էջերում: Նկատի ունենալով, որ Հիշյալ համարը մեզ չհաջողվեց գտնել Երևանի գիտական գրադարաններում, ուստի «Էջմիածն» ամսագրի խմբագրության միջոցով հնարավոր եղավ ստանալ «Հասկ»-ի հարցո խմբագրությունից, որին և հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը:

գրված էր Համբրոնում¹⁹¹: 1212 թվականին Հավանաբար Մուշի ս. Կարապետի վանքում ջուրիս գրի կողմից ընդօրինակված Գիրք Սողոմոնի հավաքածում¹⁹²; 1239 թվականին Դրազարկի մեծահողակ անապատում, Սարգիս կոռնավորի կողմից արտագրված Ավետարանը¹⁹³; 1255 թվականին Հավանաբար Կիլիկիայում Սիրիայի քահանայի և Զախար գրիների կողմից ընդօրինակված Աստվածաշունը¹⁹⁴; 1255 թվականից առաջ Կիլիկիայում Գրիգոր Կողեն գոյշից գրված և նշանավոր ծաղկող Կոստանդինի կողմից նկարագրված Ավետարանը. նրա պատվիրատում, ինչպես երևում է ձեռագրում գտնվող մի հիշատակագրությունից, եղել է Հայտնի կորավար և օրինսգետ Սմբատ Գոմստարըլը¹⁹⁵; Մի այլ Ավետարան գրված 1259 թվականին Թորոս քահանայի կողմից Տարսոնի սուրբ Յայտնի Սալ գյուղում¹⁹⁶; 1276 թվականին Կոստանց սարկավագի և Հակոբ քահանայի կողմից Սիսում արտագրված Վարք Սրբոցը¹⁹⁷, և վերջապես մի այլ Ավետարան ընդօրինակված 1289 թվականին գրի Ստեփանոս քահանայի կողմից Կիլիկիայի Յախոտան անապատում¹⁹⁸:

Հետաքրքրությունից զուրկ չէ նաև նշելը այն մասին, որ Անկյուրիայի հավաքածուում պահվել էին մեծարժեք ձեռագրերից կատարված ընդօրինակություններ: Այս տեսակետից մեծ արժեք էր ներկայացնում 1255 թվականին ընդօրինակված վերոհիշյալ Աստվածաշունը, որի հիշատակարանում գրված էր Հայությալը. «Գրեցաւ ի յաւրինակէ որ գրեալ էր ի ՆԼՁ (986) Թուականին»¹⁹⁹: Այսպիսով հիշյալ Աստվածաշունը իր Սաշտոցի և Ժամագրքի մասերով ցարդ մեզ Հայտնի ամենահին, այսինքն մոտ հազարամյա մի Աստվածաշնչից էր ընդօրինակվել:

Աստվածատուր երեց անունով մի գրի 1561 թվականին իրեն իրրեն նախագաղափար է ունեցել նշանավոր հայ մատենագիր Հովհաննես սարկավագի սալմոսու: Խակ 1629 թվականին Սարգիս «աշխարհականը» արտագրել է մի այլ սաղմոս, Սերենցի օրինա-

¹⁹¹ Բարգեն արուակից Կարողիկոս, Ցուցակ ձեռագրաց Անկյուրի Կարմիր վանուց և շրջակայից, Անդիմա, 1957, էջ 309—310;

¹⁹² Նույն տեղում, էջ 683—684:

¹⁹³ Նույն տեղում, էջ 881—886:

¹⁹⁴ Նույն տեղում, էջ 277—290:

¹⁹⁵ Նույն տեղում, էջ 1271—1276:

¹⁹⁶ Նույն տեղում, էջ 147—150:

¹⁹⁷ Նույն տեղում, էջ 757—764:

¹⁹⁸ Նույն տեղում, էջ 1115—1120:

¹⁹⁹ Նույն տեղում, էջ 1223—1230:

կից²⁰⁰: Դարձյալ հավաքածուում եղել է մեջ Մաշտոց, որը իրեկ բնագիր է ունեցել ապահովարա 893 թվականին Մաշտոց կաթողիկոսի աշակերտ Ստեփանոս Սեանցու օրինակը²⁰¹: Ուշագրավ է Կոնդակների պատճենների, օրհնության նամակների և ձեռագրաց հիշատակարանների հավաքածուն, որը կարեվոր նշանակություն կունենար ժեկ դարի պատմության համար: Գաղատիայի հայ գաղութի պատմության համար որոշակի արժեք էր ներկայացնում Անդրեաս և Թադեոս եպիսկոպոսների 1758—1823 թթ. վերաբերող օրագրությունը, և այն և այլն:

Նկատի ունենալով Անկյուրիայի ձեռագրերի գիտական արժեքը, ցուցակի հեղինակը զանազան ձեռագրերի վրա իր ուշագրությունը բենելով, իրավացիորեն նկատում է, որ այդ գրչագրերը շատ ուշագրավ են թե՛ իրենց հնությամբ և թե՛ բովանդակությամբ և արժի հետաքայում լուրջ ուսումնասիրության են՝ թարկել դրանք: Ինչ իմանար տքնաշան հեղինակը, որ սույն տողերը գրելուց քիչ անց, Անկյուրիայի իր մատնանշած ձեռագրերը ու միայն բախտը չէին ունենալու ուսումնասիրվելու, այլև այս հարուստ հավաքածուից ոչ մի նմուշ չէր հասնելու մեջ:

Հայերեն ձեռագրերի խուզարկու հայտնի բանասեր Հ. Քյուրտյանը, որ բաջաձանոթ է Արևմտյան Հայաստանից ու Թուրքիայի երեմնի հայաշատ վայրերից արտասահման տարված և օտար մատենագարաններում ու թանգարաններում պահված ձեռագրերին, նշում է, որ «Անկյուրիայի ձեռագրերի հավաքածուն բարուվին անենեացած է»²⁰² (ընդգծումը մերն է, Ս. Ք.): Դարձյալ նա է, որ մի այլ առիթով վերջին կրկին հաստատում էր իր նախորդ ասածը, գրելով. «Անկյուրիային երեն ցարդ ոչ մեկ գրչագիր հայտնը ված է»²⁰³:

Անկյուրիայի ձեռագրացուցակը կազմվել էր 1913 թվականին, շատ հնարավոր էր, որ 1915 թվականին հավաքածուի թիվը աճած լիներ և կամ շրջականներում ևս գտնվեին այլ ձեռագրեր ևս ցրված, որոնք դուրս մնացած լինեին ցուցակագրումից: Սակայն, այսօր փաստ է այն տիտոր իրականությունը, որ Անկյուրիայի հարյուրավոր ձեռագրերի հարուստ

²⁰⁰ Նույն տեղում, էջ 1213—1218:

²⁰¹ Նույն տեղում, էջ 971—978:

²⁰² Հ. Քյուրտյան, «Ցուցակ ձեռագրաց Անկյուրի Կարմիր վանուց և շրջակայից» (գրախոսություն), «Բազմավագ», Վենետիկ, 1959, էջ 48:

²⁰³ Հ. Քյուրտյան, Ցուցակ ձեռագրաց Արմաշի վանքին, պատրաստեց Հ. Թոփճյան... (գրախոսություն), «Բազմավագ», 1964, էջ 17:

Հավաքածուն սկզբից մինչև ամենավերջին ձեռագիրը այլևս գոյալիուն չունի...

Հայագիտությունը անշափ շնորհակալ է և միշտ կհարգի հիշատակը անխող հետազոտող Բարգեն արքեպ. Կյուզեսերյանի, որը դժվարին պայմաններում կարողացավ կազմել Անկյուրիայի հայերեն ձեռագրերի ցուցակը, նույնքան շնորհակալ է նաև նրա հարազատներին, որոնք հաճախ վտանգելով իրենց կյանքը, կարողացան փրկել ոչ միայն իրենց հարազատի ժառանգությունը, այլև մեր գանձարաններից մեկի հաշվեմատյանը...

Աչա շնորհիվ այդ ցուցակի մենք այսօր գիտենք մոտավորապես այն, թե ինչ կորցրեցինք մեր ձեռագրական գանձերից Անկյուրիայում:

Արմաշ: Մեր ամենահայտնի հայ ձեռագրական կենտրոնների շարքում որոշակի տեղ է գրավել նաև Արմաշի գպրեվանքին առընթեր գոյություն ունեցող մատենադարանը: «Արմաշու վանքը հիմնվեցավ Ժի դարուն առաջին տասնամյակին մեջ էջմիածնէ եկած նվիրակներու ջանքով, տեղվույն ցանցու հայության կրոնական կյանքը հոգևոր հաստատության մը շուրջը ամփոփելու մտադրությամբ և ամբողջ Փոքր Ասիր առաջակողման և Բյությանի ու շրջակայից հայության համար ուստավորական կայան մը կազմելու հեռավոր նպաստակով»²⁰⁴:

1786 թ. Բարթողմեոս արքեպ. Կապուտիկյանի առաջնորդության ժամանակ է, որ բարգավաճում է վանքը և բազմաթիվ վերանորոգությունների և շինությունների շարքում կառուցվում է նաև հատուկ մատենադարան²⁰⁵: Պետք է կարծել, որ իրեն հոգևոր կարևոր կենտրոն՝ Արմաշում հիմնադրության օրվանից գրվել ու հավաքվել են գրչագրեր, սակայն միայն վերոհիշյալ թվականին է, որ ստիպվել են առանձին մատենադարան կառուցել, անշուշտ նկատի ունենալով հավաքած ձեռագրերի կարևոր թիվը: Դեռ 18-րդ դարի վերջում Արմաշում էին հավաքած բազմաթիվ գրչագրեր, սակայն նույն դարի վերջում Զաքը Հասան բռնապետը արշավելով վանքի վրա կրակի տվեց նրա բոլոր շենքերը, այդ թվում նաև նորակառուց մատենադարանը: Արմաշի գրչագրերի հմտություննախորոշ է. Թոփճյանը գրում է, որ իր նախընթացը շունեցող այս հրդեհի ընթացքում երկու դար շարունակ ինամքով այստեղ հավաքած ձեռագրերից ո՞վ գիտե-

ինչքան ոչնչացան²⁰⁶: Մի բան սակայն ստույգ է, որ վերջերս հրատարակված Արմաշի ձեռագրացուցակում, ոչ մի ձեռագրի շնորհ գտնում գրված Արմաշում և կամ նվիրված նույն մատենադարանին 18-րդ դարի ընթացքում: Այսպիսով պետք է հաշտվել այն իրականության հետ, որ մինչև 18-րդ դարի վերջը Արմաշում հավաքված գրչագրերից և ոչ մեկը շի աղատվել թշնամու հրդեհից: Արմաշի գպրեվանքի մեջ հայտնի ժողովածուն սկսում է գոյանալ միայն Ժի դարի սկզբից, շնորհիվ տեղի ունեցած ձեռագրական նվիրատվությունների և նորանոր գրչագրերի ընդօրինակության, քանի որ Արմաշի Զարխափան և Աստվածածնի վանքը շարունակում է մնալ մեր գրչության կենտրոններից մեկը:

Ըստ մի վկայության, Արմաշի ձեռագրերը բավականին մեծ թիվ են ունեցել²⁰⁷:

Ժի դարի վերջից, երբ Արմաշի գպրեվանքը իր վերածնության շրջանն էր ապրում շնորհիվ Մաղաքիա արքեպ. Օրմանյանի և Եղիշե արքեպ. Դուրյանի վանահայրության, գրադարանն ու ձեռագրատունն էլ զգալիորեն ճոխանում են:

Արմաշում հավաքված և Թոփճյան ձեռագրացակում գրանցված 223 գրչագրերն էլ ձեռք են բերվել Ժի դարի ընթացքում: Զեռագրերի հիշատակարաններից երեսում է, որ նրանցից մի մասը նվիրվել է Արմաշի գպրեվանքի մատենադարանին Ստեփանոս և Պողոս պատրիարքների, վանահայր Գևորգ արքեպ. Ալիքսանյանի, Եղիշե արքեպ. Դուրյանի, Բարգեն վ. Կյուզեսերյանի հորդորներով՝ Քիրենճյան ընտանիքի (1897 թ. նվիրել են 16 գրչների) և ուրիշների կողմից:

Արմաշի մատենադարանն էլ մեր շատ ձեռագրական կենտրոնների նման 1915 թ. կողապտվեց ու ոչնչացվեց, երբ արմաշականներն ու Արմաշի բնակիչները տարագրվեցին: Մեծ բարերախտություն էր հայագիտության համար, որ նման Անկյուրիայի, փրկվեց նաև Հ. Թոփճյանի կազմած Արմաշի ձեռագրերի գիտական ցուցակը, և որը վեր-

²⁰⁶ Հ. Թոփճյան, Արմաշի ձեռագրերները, «Հասկ», Հայագիտական տարեգիրք, Ա տարի, 1948 թ., Անբիլիաս, էջ 62—88:

²⁰⁷ Հ. Բարսեղ Սարգսյանը գրում է, որ Խոսրովիկի մի գործը, որը պահվում է Վենետիկի Մխիթարյան մատենադարանում 319դ համարի տակ, ընթարինակվել է Արմաշի վանքի 1827 համարը կրող մի ձեռագրերից, Հովհաննես Տեր-Կարապետյան Պրուսացիի կողմից: Այս վերջինն էլ արտագրվել էր «1795 Սկալտարի Սելամիկ» թաղը բնակող Տեր Մարտիրոս Կուսակրոս սարկագագին ձեռագրեն, որը խնդրեց անհնուն ունի Պրուսացիի գաղափարիլու համար» («Բագմալէպ»,

²⁰⁴ Արմաշու գպրեվանքին 25-ամեայ Յորելիանին առթի 1889—1914, Կ. Պոլիս, 1914, էջ 6:

²⁰⁵ Նույն տեղում:

ջրբաս հրատարկվեց Գալուստ Կյուպենիյան Հմանարկության կողմից, Վենետիկում, և Գալաքարի տպարանից: Թեև Թոփհայնը իր ցուցակում թվագրել է միայն 223 գրչադիր, սակայն նրա ցուցակում գտնվում են նաև մեկ համարի տակ գրանցված ձեռագրեր, որոնք բաղակացած են 6 (տե՛ս № 102), 5 (տե՛ս № 103), 2 (տե՛ս № 46) և այլ հատորներից: Արմաշի գրչագրերը 1915 թվականին պետք է որ ավելացած լինեին, քանի որ Թոփհայնի ասելով, ձեռագրացուցակը կազմվել էր 1903—1904 թթ., այդ հաստատվում է նաև նրանով, որ մուտք գործած նորագույն ձեռագրերը ձեռք էր բերվել 1903 թվականին (տե՛ս № 145):

Այս բոլորից հետո կարծում ենք, որ առանց հիմքի չէ մեր այն ենթադրությունը, թե Արմաշի գրչագրերը ի հաշիվ թվագրված համարներից դուրս գտնվող հավելվածական հատորների և ինչպես նաև 11 տարիների ընթացքում ժողովածուի ունեցած հնարավոր աճի, նրանց թիվը եղենին նախօրյակին պետք է որ հասած լիներ ամենայն հավանականությամբ ավելի քան 250 գրչագրի: Անշուշտ այս թիվի մեջ մենք գեն նկատի շունենք Արմաշի դպրեվանքի շրջանավարտների (ապագա հայոտնի հոգևորականների և աշխարհականների) բազմաթիվ ավարտաճառերը, որոնք ևս խնամքով պահվում էին այնտեղ, և որոնց դարձալ նույն ողբերգական վախճանը վիճակվեց:

Արմաշի վարդապետական ավարտաճառերից իրեւ նմուշ այստեղ հիշենք միայն մեկի մասին: Կ. Պոլսի նախկին պատրիարք Զավեն արքապ.՝ը 1930 թ. Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց մատենադարանին նվիրել է

1892 թ., էջ 211, հմմտ. նաև Հ. Հ. Տաշյան, Մագենագական մանր ուսումնակիրութիւնք... Վիեննա, 1895 թ., էջ 63): Այստեղ ուշագրավ է երկու հանգամանքը, առաջինը՝ որ վերօնչչչալ ձեռագրերը այժմ բացակայում է Թոփհայնի կազմած ձեռագրացուցակից. և երկրորդը՝ որ այդ գուազիրը կրել է համար, արինքն «թիւ 1827»: Պետք է ենթադրել, որ գրչագրերը ապա ընդօրինակվել է ժթ գարի սկզբում, երբ վերոհիշչալ գրիլը ուսանում էր Արմաշում և բացի հիշյալից, ինչպես երկում է Արմաշի ձեռագրացուցակից, բազմաթիվ ձեռագրերը էր ընդօրինակվել և կամ թարգմանություններ արել Արմաշում և այլուր Հավանարար անցյալում Արմաշի ձեռագրերն ու տապագիր գրեթե միասին էին գրանցվել, գուց այդ պատճառով էլ հիշյալ ձեռագրերը կրել է 1827 համարը: Այստեղ կարերն այն է, որ Արմաշում գեն ժթ գարի սկզբում եղել է մի ձեռագրի, որը հավանարար կորած լինելով դարձ է մնացել Թոփհայն ցուցակից: Պետք է կարծել, որ այս օրինակը միակը չպետք է լիներ այս ժողովածուի պատճության մեջ:

Արմաշի դպրեվանքում 1896 թ. իր կողմից դրված վարդապետական թեզը՝ Հովհաննես Խմատասակեր Օձնեցու մասին (բաղկացած 421 էջից), որի Հիշատակարանի մի մասը մեջ ենք բերում ստորեւ. «... Աշխատությունների պարագաների համար հանձնեցի զայն դպրեվանքին Տեսլության: Աշխարհավեր պատերազմի ժամանակ՝ Թոփհիք Հայոց պատահած աղետքներուն զերծ շմաց մեր սիրելի դպրեվանքն ալ: Անոր պաշտոնյաներն և ուսուցչները ցրվեցան կամ տարագրվեցան ու վանքը կողոպտվեցավ: Աշխատասիրությանս բնագիրը, որ Դպրեվանաց Մատենադարանին մեջ էր, անհետ կորսվեցավ: Անոր այս ընդօրինակությունը, որ բոլով պահված կը մնար նույնությամբ կը հանձնեմ Երևանաղեմի Ս. Հակոբյանց Մատենադարանին:

1930 փետր. 27, Պաղտատ, Զավեն արքեպուս.»²⁰³

Անհրաժեշտ է նշել նաև, որ Արմաշի դպրեվանքին նվիրված հոբելյանական հատորում նշված են բազմաթիվ ավարտաճառեր, որոնք պատկանում են հայտնի արմաշականների գրչին:

Արմաշի գրչագրերը ընդօրինակվել էին ԺԴ—ԺԹ դր.: Հավաքածուի հնագույն ձեռագրություններու գրվել էր 1351 թ. Կիրակոս վարդապետի ձեռքով և այն նաևն Ասորու Հովհաննու Ավետարանի մեկնությունն էր: Ձեռագրերի կողերին կարված մազաղաթյան պահպանակների շարքում եղել են մեսրոպյան երկաթագրով գրված բազմաթիվ պատառիկներ Աստվածաշնչի Հին և Նոր կատարարաններից, ճառընտրերից և այլն: Արմաշի գրչագրերի ժողովածուն ժամանակագրական կարգով հետևյալ պատկերն էր՝ ներկայացնում, ժդ դարից էր՝ 4 ձեռագրի, ժե դարից՝ 7, ժջ դարից՝ 8, ժէ դարից՝ 30, ժԸ դարից՝ 58, ժթ դարից՝ 116 ձեռագրի: Գրչագրերից միայն 5-ն էին գրված մազաղաթի վրա, իսկ մեծ մասը՝ թղթի վրա: Ձեռագրերի որոշ մասը ընդօրինակվել էր Արմաշում, իսկ մյուսները՝ Կ. Պոլսում և նրա զանազան մասերում (Սկյուտար, Սամաթիա, Միջազգուշ, Պեկոզի, Ղալաթա, և այլն), Երաստիայում, Կեսարիայում, Տիգրանակերտում, Ամասիայում, Պրուտայում, Եղեղյաց գավառում, Կարինում, Կուտինայում, Էջմիածնում, Շոռոպում, Ջուղայում, Շոռոմում, Սորբիաթում (Ղրիմ), Լիճաստանում, Երևանաղեմում, Զմյուռնիայում և այլ վայրերում:

Ձեռագրերի գրիների շարքում էին գտնվում միջնադարյան նշանավոր գրիչ Ստեփանոս Գոյներերիցանցը, Հակոբոս

²⁰³ «Սիոն», 1930 թ., Երևանաղեմ, էջ 94:

Նալյան պատրիարքը, Հայունի գրչունի Բրաբիոն նոտարը, թժիշկ Ստեփանոս Շեհրիմանյանը, Ստեփանոս Խովացին, Պետրոս Կապիսկի. Աղամալյան-Բերդումյան Նախիջևանցին, Հովհաննես ք. Միրզայանց Վահանցին, Ֆիդիկա Պողով պատվելին, Հովհաննես Տերյանց-Զամուրճյանը և ուրիշներ:

Զեռագրերի պատվիրատուների թվումն էին Հովհաննես Պատրիարք Բաղդշեցին (Կոլոտ), Թրակիայի Հայոց առաջնորդ Աբրահամ վարդապետ Կրետացին (ապա Աբրահամ Գ կաթողիկոս Ամենայն Հայոց) և ուրիշներ:

Հայագիտության Համար զգալի կորուստ է Արմաշի Հարուստ ձեռագրական Հավաքածուի ոչնչացումը: Զեռագրացուցակի կազմող Հ. Թոփեցյանը, ինչպես իր ցուցակի առաջարանում, այնպես էլ իր գրած Հոդվածներում²⁰⁹ Հանգամանալից կերպով անդրադարձել է Արմաշի գրչագրերի գիտական արժեքին, ուստի մենք այստեղ կրավականանանք միայն նրանց բովանդակության վերաբերյալ շատ համառու մի ակնարկով:

Հավաքածուում կային Հայ մի շարք պատմիչների գործերից կատարված ընդորինակություններ, երբեմն մի քանի օրինակներով, այսպես՝ Մովսես Խորենացու (2 օրինակ). Փալստոս Բուլզանդի, Եղիշեի, Մովսես Կաղանկատվացու, Հովհաննես կաթողիկոս Դրասիանակիերացու (3 օրինակ), Թովմա Արծրունու, Թովմա Մեծոփեցու (ձեռագիր 1597 թ.) և այլոց պատմությունները: Նույն ժողովածուում էին գտնվում նաև Միքայել Ասորու Ժամանակագրությունը, Գրիգոր Մագիստրոսի թղթերը, Ներսես Շնորհալու «Ողբեկսիո» գործը: Հարուստ էր նաև կրոնական գրականությունը, գտնվում էին Հայ և օտար բազմաթիվ Հեղինակների աշխատություններ, այդ թվում Հովհան Ուկիերանի անտիպ մի քանի գործերը, ոնինի թուուական և կաթողիկ աստվածաբանության թարգմանական մեծ թվով աշխատությունները: Այստեղ էին նաև Դավիթ Անհաղթի, Գրիգոր Տաթևացու և ուրիշների իմաստափական գործերը: Պահպատմ էին նաև Դավիթ Անհաղթի, Գրիգոր Տաթևացու և ուրիշների իմաստափական գործերը: Պահպատմ էին նաև Ներսես Շնորհալու Հանելուկ-

ները, Վարդան Այգեկցու առակները, Սիմեոն Երևանցի կաթողիկոսի ինքնագիր քարոզգիրը (№ 76) և այլն: Շատ հարուստ էր նաև թժկական գրականությունը, ուր կային օրինակներ Ամիրգովաթի, Ստեփան Շեհրիմանյանի, Բեստենի և ուրիշների գործերից:

Ճոփի էր կանոնական և ծիսական գրականությունը, ինչպես օրինակ՝ Ավետարան, Սաղմոս, Մաշտոց, Հայումալվուրք, Շարակնոց, Աղոթագիրք, Գանձարան, Ճարոնատիր, Քարոզգիրը և այլն: Կային նաև բառորդեր Պարսկերեն-Հայերեն, ինչպես նաև թուրքերեն-արաբերեն, իտալերեն և ֆրանսերեն լեզուների, Գիրք վաստակոցի ժողովը մի ընդորինակությունը: Ուշագրավ էին նաև Հին և նոր պատմական անձնավորությունների և քաղաքների նվիրված ոտանավորների ժողովածուն, ուր կային Հայկ Նահապետին, Անիին, Վաղարշապատին, Լեռն թագավորին, Ներսես Լամբրոնացուն, Լեռն վերջինին և այլոց նվիրված բանաստեղծություններ: Բազգագիրք ուամկականը, Վենետիկի Միթարյան Հայրերի քերթվածների ժողովածուն, նշանավոր պատմաբան Միքայել Զամշյանի նամականին և այլն: Աշխարհագրական բովանդակությամբ երկերի շարքում էին գտնվում 7-րդ դարի «Աշխարհացուց»-ը, և մանավանդ № 11 զրագիրը, ուր տրվում էին Հայաստանի գավառները և նշվում բոլոր այն քաղաքներն ու գյուղերը, ուր նշանավոր անձնավորությունների գերեզմաններն էին գտնվում: Բայց Հ. Թոփեցյանի, վերջինս արժեքավոր էր Հատկապես եկեղեցական-հնախոսական տեսակետից, և այն ամենայն Հավանականությամբ խմբագրված էր 15—16 դր. և իր բովանդակությամբ բոլորովին տարբերվում էր Հայտնի Հայ աշխարհագրական գրականությունից (էջ 55): Բացի Կանոնագրուերից և Դատաստանագրերից, մեծ արժեք էր ներկայացնում նաև № 28 գրչագիրը, որը ինչպես երեսում էր իր բովանդակությունից, Կիլիկիան Հայկական թագավորության մեջ օգտագործված մի Դատաստանագրերից էր և առատ նյութ էր պարունակում կիլիկիան միջավայրի և նրա հետ կապված Հարաբերությունների ուսումնասիրման Համար: Ուշագրավ է, որ առանձին օրենքով արգելվում էր երեխաներին իրենց հոր Հետ թատրոն գնալը:

Արմաշի գրչագրերը մանրանկարչական տեսակետից շատ չէին աշքի ընկնում, սակայն նրանց մեջ բացի Ավետարանների խորաններից, ավետարանիշների նկարներից գտնվում էին նաև մեր միջնադարյան նշանավոր գեմքերի դիմանկարներով զարդարված ձեռագրեր, որոնցից անհաջող ենք:

²⁰⁹ Հ. Թոփեցյան, «Հովհեր Արմաշի ձեռագրերներեն», «Միոն», 1927 թ., էջ 218—220; Նույն հեղինակի՝ «Արմաշի ձեռագրերները», «Հասկ» Հայագիտական տարբերք, Ա տարի, 1948, Անթիկաս, էջ 62—88; Նույն հեղինակի՝ «Կաթողիկ գրականությունը Արմաշի ձեռագրերում» մեջ, «Հասկ» Հայագիտական տարբերք, Բ տարի, 1949—50 թթ., էջ 294—309; Նույն հեղինակի՝ «Եղուցակ ձեռագրաց Արմաշի վանքին», Վենետիկի—Ա. Ղազար, 1962 թ., էջ 5—7:

գտնում հիշատակել. Գրիգոր Մագիստրոսի նկարը իշխանական զգեստով, և որը, ինչպես նշում է ցուցակի հավամողը, հավանաբար արտադրված պետք է լիներ հին մի գրչագրից (№ 41 և այլն), ներսես Շնորհալու, Գրիգոր Նարեկացու (ձեռ. № 222), Գրիգոր Տաթևացու նկարները (ձեռ. № 197), և այլն: Հավաքածուին մաս էին կազմում նաև խազագրված ձեռագրերը, և այլն:

Արմաշի ձեռագրերում կային այնպիսիներ, որ բազմիցս փրկվել էին ասպատակողների ձեռքից: Նման ձեռագրերի հիշատակարանների հետ ծանոթացումն իսկ մեզ հնարավորություն է ընձեռում պատկերացնելու, թե մեր պապերը ինչպիսի անհողողդ հավատք էին տածում գեպի հայ ժողովորի ապագան: Այստեղ բավական է հիշատակել միայն № 145 գրչագրը, որը Ավետարան էր և գրվել էր 1433 թ. Հովհաննես գրչի կողմից: Շատ շուտով այն գեղի էր ընկել թշնամիների ձեռքը և հայ մի տիկին Գուլազ անոնվ Շամանեալ ի պարանոցէն զուզ մի ԳՌ (3000) գեկնի և ետուր ազատեաց զՍովոր Աւետարանսա: Սակայն մի քանի դար անց 1733 թ. հունվարի 10-ին նույն գրչագրեր այս անգամ Շամախիում է գերի ընկել լեզգիների ձեռքը և դարձյալ ազատվել է Ակնցի մահտեսի Սբրահմամի որդի Հակոբի կողմից²¹⁰:

Արմաշի ձեռագրերի ճակատագրի մասին ցարդ շատ թիշ բան է հայտնի: Այդ պակասը մենք ցանկացանք լրացնել դիմելով ականատեսների վկայություններին: Այս տեսակետից ուշագրավ է բնիկ արմաշցի, այժմ երևանում բնակվող ուսուցիչ և գրող Մ. Փափազյանի գրառած ականատեսի անտիպ հուշերը, որոնք վերաբերում են Արմաշի վանքի հարուստ ձեռագրական հավաքածուի ողբերգական վախճանին: Այդ մասին նա գրել է հետևյալը: «Ես բնիկ Արմաշցի եմ և իմ մանկությունը անց եմ կացրել գրեթե վանքի բակում՝ ուսումնարանում սովորող դպիրների հետ ու միշտ ցանկացել եմ ուսումնարանի նկուղային հարկի ընդարձակ սրածի դարակներում դասավորված գրքերին ծանոթանալ մոտիկից: Թիրան այդ էր պատճառը, որ 1918 թվականի նոյեմբեր ամսին, թե դեկտեմբերին, երբ կրկին հայրենի գյուղ վերադարձա (աբորից), խկույն գնացի մատենադարան, որ ինձնից առաջ շատերն էին անարգել կերպով մտել ու գուրս եկել: Սակայն խորապես հուզվեցի, երբ դարակներում ոչ մի

գիրք չտեսած... կային հատակին թափված գրքեր՝ անխնամ ու բրդված...

Այդ օրերին կլինեկան և չէի իմանում, թե ձեռագրերն ինչ արժեք են ներկայացնում: Սկսեցի անփութորեն հատակին կիտված թղթերի միջից փնտրել միայն չպատառութած ու ամբողջական գրքեր, որոնց թիվը կազմեց ութ ձեռագրի, մեկ տպագիր և մեկ հատ էլ Հայաստանի պատմական բարտեզը՝ կտորի վրա փակցված:

Հայրս՝ Հակոբ էքինդին, որ հմուտ գրաբարագեա էր, տուն վերադարձավ 1919 թվականի գարնան. նա մեկնաբանեց, թե ձեռագրերը ե՞րբ են գրված և ովքե՞ր են նրանց հեղինակները: Հետևյալ օրը, հորս հրավերով, մեր տուն եկան, դպրեվանքն զրադենող երկրագործական թեքումով, դպրոցի տնօրինն ու երկու դասատուները: Մատենադարանից հրաշքով փրկված ձեռագրերը հայրս նվիրեց հիշյալ զպրոցին, նույնպես տպագիր գիրքն ու քարտեզը: Դպրոցի տնօրինը սիրով և շնորհակալությամբ ընդունեց մեծարժեք նվերը, մանավանդ շատ ուրախացվ, երբ այդ գրքերից մեկը գրված էր երկրագործության մասին: Դպրոցի տնօրինը խոստացավ գրանցել ձեռագրերի նվիրատվության մասին դպրոցի հատուկ մատյանում:

Ահա այն ամենը, որ հայտնի է ինձ Արմաշի դպրեվանքի մատենադարանի ու ձեռագրերի մասին»²¹¹:

Սակայն ինչպես երկրագործական վարժարանը, այնպես էլ Արմաշի երբեմնի ճոխ մատենադարանից փրկված վերոհիշյալ սակավաթիվ գրչագրերն էլ քեմալական շարժումների հետևանքով լրվեցին և հայ բեկորները ստիպվեցին փախուատի դիմել:

Որքան մեզ հայտնի է, մինչև այժմ մեկ ձեռագիր է միայն փրկվել Արմաշի դպրեվանքի գրչագիրներից: Հայ ձեռագրերի ժրազան խուզարկու, բանասեր Հ. Քյուրյանը Արմաշի գրչագրերի ճակատագրի մասին նշում է հետևյալ արժեքալոր մանրամասնությունները. «Ինչ ինչ գրչագիրներ ալ կրնան հոսու ու հոն փրկված ըլլալ կրորասեն, քանի որ իմ հավաքածուի մեջ Արմաշի հավաքման նախկին թիվ 200 գրչագիր Մաշտոցը կա: Ինձի դրկված է Կ. Պոլսեն, ուրիշ գրչագիրներու հետո: Սակայն մեծարգո բանասերը նկատի ունենալով այն հանգամանքը, որ Արմաշի հավաքածուն չուներ առուծախի համար հնա-

²¹⁰ Հ. Թովինյան, Ցուցակ ձեռագրաց Արմաշի վանքին, Վենետիկ, 1962, էջ 277—278.

²¹¹ Օգտվելով առիթից մեր շնորհակալությունն ենք հայտնում հարգելի ուսուցիչ Մ. Փափազյանին՝ սիրահում կերպով մեզ տրամադրած վերոհիշյալ կարևոր տեղեկությունների համար:

գարյան և նկարագարդ ձեռագիրներ, ուստի նա եղբակացնում է գրելով. «Այդ իսկ պատճառով կարելի է մեծ մասամբ չփրկվեցին»^{212:}

Արմաշի ձեռագրերին վիճակված ճակատագրի մասին մենք ունենք նաև մի այլ ուշագրավ վկայություն, որը հիմնած է ականջալուր անտիպ մի հիշողության վրա, որը դժբախտաբար գալիս է հաստատելու վերեւում մեր կողմից արված ենթադրությունը.

«1921-ին հանդիպեցա Պուբրեշ տարագրութենե վերագրածող իզմիտցիի մը, որուն հետխոսակցելով՝ միասին հասանք ափսոսանքի որ իզմիտի հայաշատ և ազգասեր գաղութը փճացավ, ինչպես նաև Արմաշի Դպրեվանքը, որու նախկին ուսանողն եմ եղած: Մարդը ավագելով հայտնեց, թե տարագրութենե վերագրածին իզմիտի թուրք նպարավաճառները մեզ պանիր, բրինձ կը վաճառեին, իսկ թուղթերը ձեռագիր գրերե փրցված էշեր էին, մեզ հետ եղող Արմաշցի մը հայտնեց, թե Արմաշի ձեռագիրներն են»^{213:}

Ահա այսպես է, որ մեր ձեռագրական բազմահարուստ մյուս հավաքածուների նման ոչնչացվեցին նաև Արմաշի դպրեվանքի գրեթե բոլոր գրագրերը..»

Սեբաստիա. — Հնուց ի վեր մեր գրչության կարեւոր կենտրոններից մեկն է եղել Սեբաստիան Սեբաստիայում գրված ու ցարդ մեզ հայտնի հնագույն գրչագիրը՝ 1066 թվականին ընդօրինակված մի Ավետարան է, որի գրիշն է եղել Գրիգոր քահ. Ակոռեցին: Նույն գրչագիրը հետագայում պատճենաված է ներսին Շնորհալուն: Այն այժմ պահպում է Մաշտոցյան մատենադարանի հայերեն ձեռագրերի հավաքածուի 311 համարի տակ: Սեբաստիայուց վանքերն ու եկեղեցիները բացի գրչության վայրեր լինելուց, հանդիսացել են նաև մատենադարաններ: Ս. Հրեշտակապետի վանքը հարուստ է եղել եկեղե-

ցական անոթներով, զգեստներով և ձեռագիր մատյաններով, որոնք ապա ու նշան են փոխադրվել: Ս. Նշան վանքը իր հիմնարկությունից սկսած մինչև վերջին ժամանակներս կալվածներից բացի, ստացել է նաև անոթ ու զգեստ, ձեռագիր ու տպագիր գիրը^{214:}

Անցյալում Սեբաստիայից ևս բազմաթիվ գրչագրեր տարվել են այլ վայրեր: 1896 թ. չարգերից հետո մի շարք գրչագրեր է վաճառել Սեբաստիայի Պետրոս եպիսկոպոսը Փարիզում բնակվող հնավաճառ Մ. Խնճույնյանին՝ շարգերի պատճառով տուժած դպրոցների և այլ հաստատությունների վերաշնության համար: Այդ ձեռագրերի մեջ էր գտնվում հնադարյան մի Ավետարան մանրանկարներով զարդարված, որը սակայն ներկայում մասերի բաժանված գտնվում է տարբեր վայրերում ապրող անձնավորությունների մոտ: Հիշյալ Ավետարանը նախապես Փարիզի Սվաճյան հավաքածուից մաս կազմելուց հետո, տարվել է նյու-Յորք՝ հնավաճառ հանգույցյալ Գրիգոր Մինասյանին, որը գրչագրից Ղուկասի Ավետարանը ծախել է Վաշինգտոնի Ֆրիրը Արտ Գելլըրիին, ուր և այժմ պահպում է Ղուկասի սկզբնագրով: Մնացածը, ձեռագրի կառ-քար համար մահացի հետո ծախվել է բանասեր Զ. Քյուրտյանին: Նույն Ավետարանը Սվաճյան հավաքածուում եղած ժամանակ ունեցել է նաև հինգ կանոնախորաններ և մեկ էջի վրա ամփոփված շորս ավետարանիների մանրանկարներ, որոնց սակայն ուր գտնվելը ցարդ հայտնի չէ^{215:}

Ս. Նշանի վանքում մինչև ժթ գարի վերջում պահված որոշ ձեռագրեր, ըստ Մեսրոպ եպիսկոպոսի. Տեր-Մովսիսյանի, այժմ գտնվում են Օքսֆորդի և Լոնդոնի Բրիտանական թանգարանի մատենադարաններում: Հիշյալ գրչագրերը նախապես հիշվել էին Սրբանձանցի ցուցակում^{216:} Տեղեկություն ունենք

²¹² «Բազմավիճակ», Վենետիկ, 1964, էջ 170:

Արմաշից փրկված մեզ հայտնի վերտիշյալ միակ գրչագիրը բովանդակությամբ Մաշտոց է և գրվել է 1699 թ. Կոտինայիսմ՝ Տեր Աստվածատոր գրչի կողմից (տե՛ս Հ. Թոփինյան, Ցուցակ ձեռագրաց Արմաշի... էջ 382—387):

²¹³ Վերոհիշյալ տեղեկությունը մեզ սիրահոժար տրամադրեց, երբեմնի արմաշական, հարգելի Ս. Մատենճյանը, որի համար հայտնում ենք մեր շնորհակալությունը:

²¹⁴ Հ. Հ. Ոսկյան, Սեբաստիայի վանքերը, «Հանդէսամօռեալ», 1945, էջ 35, 36, 65:

²¹⁵ Հ. Քյուրտյան, Ավետարի մը հին հայ մահրանկարչության պատճենների վրա, «Հանդէսամօռեալ», 1965, էջ 233:

²¹⁶ Մեսրոպ եպիսկոպոսի. Մեր-Մովսիսյանի դիման (այժմ Աշատոցյան Մատենադարանում):

նաև այն մասին, թե 1903 թ. Վենետիկի Սիրիարշաններից Հ. Ալեքսի Հովսեփյանը Սեբաստիայի և Արաքիրի կողմերից 29 ձեռագրեր է բերել և հանձնել Վենետիկի Սիրիարշան մատենադարանին²¹⁷:

Սեբաստիայի գրչագրերով առաջինը զբաղվել է Գևոնդ վ. Փիրզակիմյանը, որ 1864 թ. կազմել սկսած իր «Նշխարք պատմութեան Հայոց» անտիպ հավաքածուներում նյութեր է բաղել Սեբաստիայում պահված շուրջ 16 գրչագրերից: Սակայն Սեբաստիայի հայերեն ձեռագրերի մասին համեմատաբար ավելի կարեոր տեղեկություններ է հաղորդել Գ. վ. Մրվանձտյանցը՝ նա 1878 թ. տեսել ու համառու թվագրել է 89 գրչագիր, միևնույն ժամանակ ասելով, որ ինք հնարավորություն չի ունեցել անենելու Սեբաստիայի բոլոր ձեռագրերը, քանի որ «Սեբաստիո մեջ բազմաթիվ են ձեռագիրները, բայց մենք մեր տեսածներու ցանկը և հիշատակներն միայն կը զնենք այստեղ»²¹⁸, գրել է նա: Սեբաստիայի ձեռագրերի մասին խոսել է նաև Պողոս վ. Նաթանյանը²¹⁹: Եվ վերջապես Սեբաստիայի «Եղեռնապատում»ի անմաշ հեղինակ բանասեր Կարապետ Գաբրիէլյանն էր, որ առաջին անգամ լինելով ձեռնամուխ էր եղել և ավարտել ինչուս Սեբաստիայի, այնպես էլ նրա վանքերում գտնվող ձեռագրերի հարուստ ցուցակագրությունը, որը սակայն եղեռնի ժամանակ հեղինակի բազմաթիվ այլ աշխատությունների հետ ունշացավ²²⁰: Կ. Գաբրիէլյանը նախապես կ. Պոլսի «Բիւլանդիոն» թերթում 1906 թ. մի հոգվածաշարով անդրադարձել էր Սեբաստիայում պահվող բժշկական ձեռագրերին և հնատիպ գրականությանը²²¹: Գերմանացի հայագետ Յր. Մյուլերը հիմնվելով Սրբանձայանի տվյալների վրա, գերմաներին լեզվով 1896 թ. հրա-

տարակել է Սեբաստիայի ձեռագրերի համառու ցուցակը²²²:

Սեբաստիայի ընդարձակ ձեռագրացուցակը կազմելու պատիվը սակայն պատկանում է թեմի առաջնորդ և ապա նրանակամբ պատրիարք, բանասեր Թորգոն արքեպիսկոպոս: Գուշականին, որը 1908—1913 թթ. ընթացրում սկսեց և ավարտին հասցրեց այն: Հ. Ն. Ակինյանի վկացությամբ, այդ ցուցակը կազմված էր հինգ հատորի մեջ մեծ բարեխրդանությամբ և գիտական հասկացողությամբ²²³: Թեև այդ ձեռագրացուցակը կրում է «Ճուցակ հայերեն ձեռագրաց Ս. Նշանի վանուց ի Սեբաստիա» խորագիրը, սակայն պարունակում է նաև շրջակա վանքերի մեջ պահվող գրչագրերը, թեև ոչ լրիվ, որոնք ապա մասամբ տեղափոխվել են ս. Նշան վանքում²²⁴: Սեբաստիայի ձեռագրերի հավաքման մասին ուշագրակ են Թորգոն արքեպ. Գուշականի հետեւյալ տեղեկությունները հաղորդված Հ. Ն. Ակինյանին, 1922 թ. մարտի 3-ի իր նամակում: «Մեծագույն մասը գտած եմ Ս. Նշանի վանուց Մատենադարանին մեջ, զորոնք իմ հոն համեմ հառաջ վերցին անգամ ամփոփեր է Գաբրիէլյանի մեր միաբաններին Սեբաստիայի Տ. Սահակ վ. Ստավրացյան, որ ատեն մը իմ նախորդին Տ. Պետրոս արք.-ի օգնական էր: Թեև հավաքման կազմվելու մասին որևէ հիշատակ չկար հոն, բայց կը կարծեմ թե այդ մասին մեծ ջանք պետք է ունեցած լլա Տ. Հովհաննես եպիսկոպոս Սեբաստիայի, որ առաջնորդ էր Վիճակին և վանահայր Ս. Նշանի, Ս. Գրոց և աղքային ուսմամբ մշակված միտք մը: Այս հավաքման վրա ես հետո ավելցուցի իմ նախորդին Տ. Պետրոս արքեպ. Թահմիլիյանի սեփական քանի մը ձեռագիրները և Աղասուց զյուղի Ս. Հրիշտակապետ վանաց (Սեբաստիո վիճակին մեջ) և Սեբաստիո քաղա-

²¹⁷ Հ. թ. վ. Սարգսյան, Մայր ցուցակ... Ա., 1914, էջ. 779 (№ 187):

²¹⁸ Գ. վ. Մրվանձտյանց, Բորսու աղբար, Ա., էջ 183:

²¹⁹ «Տեղեկագիր ընհանուր վիճակին Սեբաստիո», Կ. Պոլիս, 1877, էջ 100—106:

²²⁰ Գումկան Սեբաստիո (Կ. Գաբրիէլյան), Եղեռնապատում Քերոսն Հայոց և նորին մեծի մայրաքաղաքի Սեբաստիո, 1924, Պուբլն, էջ 133—134:

²²¹ «Բիւլանդիոն», Կ. Պոլիս, 1906, № 2962—2963:

²²² Die armenischen Handschriften von Sewast (Swas) und Şenquş. Von Dr. Friedrich Müller. Professor an der Wiener Universität. Wien, 1896.

²²³ Թ. արք. Գուշակյան, Ցուցակ հայերեն ձեռագրաց Ս. Նշանի վանուց ի Սեբաստիա, Վիճակին, 1961, առաջարանից (Հ. Ն. Ա.):

²²⁴ Նույն տեղում:

քի Ս. Սարգիս եկեղեցվոր մեջ պահված ձեռագիրները²²⁵:

Սույն ձեռագրացուցակը պարբերաբար լույս տեսավ «Հանդէս ամսօրեայ»ի էջերում 1922 թ. օգոստոսից մինչև 1929 թ. օգոստոսը, ընդգրկելով 155 գրչագրի նկարագրություն: Սակայն մնացած 128 գրչագրերի նկարագրությունը կազմով այն ժամանակ պահանջած լինելով, այնպես էլ նա ամբողջական ձևով ցարդ շնորարակվեց, ուստի Հ. Ն. Ակինյանը այն ամբողջացնելու մտադրությամբ, օգտագործեց իր անձնական գործածության համար կազմած համառոտ ցուցակը, որով և ձեռագրացուցակի այս մասը ավելի նման է ցուցակներին սովորաբար կցված համառոտ տախտակի նկարագրության: Սույն ձեռագրացուցակը 1961 թ. լույս տեսավ նաև առանձին գրքով: Այն ընդգրկում է 283 + 1 գրչագրերի նկարագրություն: Սակայն դժբախտաբար մինչև այժմս էլ անտիպ է մնում Թորգոմ արք. Գուշակյանի ձեռագրացուցակի երկրորդ մասի 128 գրչագրերի ընդարձակ նկարագրությունը, որը պահվում է Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց Մատենադարանում:

Նախապես կարծվում էր, թե Սեբաստիայի ձեռագրերից ոյննչ չի փրկվել Ահա թե ինչ էր գրում քանասեր Կ. Գարիկյանը այդ մասին: Տեղվոյն հայության վիճակված ահավոր տարագրությունից և կոտորածից հետո, Սեբաստիայի ս. Սարգիս եկեղեցին, Անապատի վանքը, հայոց գերեզմանատունը հիմնահատակ քանդում են և նրանց քարերով զորանոցներ կառուցում և փողոցներ սալահատակում: Ի վերջո կարգը հասնում է ս. Նշան վանքին: Նրա մատենադարանի մի քանի հազար ընտարի գրքերը և գրչագրերը բաժանում են պարենային խանութներին, հալվա, թութուն ծախողներին և հիվանդանոցների ղեղարաններին և թերթ-թերթ պատառտելով մեջը ապրանք են փաթթում և կամ հրապարակների վրա ոտնակոխ են անում: Դարձալ Գարիկյանը գրում է, որ «Եղայուր եղտյուր կը թապլեն, աղբանոցները կը նետեն, կայրեն, տյունյա յուզերինտե պուելարը

օգույան ատամ տանա գալար* մը ըսելով (Աշխարհի երեսին սրանք կարդացող դեռևս մարդ մնացել է): Ոչնչացվեցին նաև դրաբոցների, ընթերցարանների, կուսակցությունների հավաքատեղիների, գրավաճառների և բնակելի տներում պահված ձեռագրերն ու տպագիր արժեքավոր շատ գրքեր²²⁶:

Սեբաստիայում հայերեն ձեռագրերի ոչնչացումը շարունակվում է մի շարք տարիներ: Հստ երևոյթին հայերի տարագրությունից շատ հետո, թուրքերը կարողացել են բացել, ինչպես Սեբաստիայի, այնպես էլ նրա շրջականերում գտնվող և հայերի կողմից պահպանված թաքստարանները, քանի որ դեռևս 1926 թվականին Սեբաստիայի շուկայում մթերքները փաթթվում էին հայերեն տպագիր և ձեռագիր գրքերի թերթերով: Այդ մասին է վկայում հասարակական գործիշ և ազգագրագետ, հանգուցյալ Գ. Հալածյանը, մեղ տրամադրած իր հետագա անտիպ հուշերում: «12 օգոստոս 1926: Երեկ խնդրած էի քանտակի կառտիլան Ահմետ էֆենտիկին, որ շուկային կարգ մը գնումներ ընե ինձ համար (կառտիլան Ահմետի մասին տե՛ս «Թէպի կախաղան», էջ 566): Երբաժած ծրարները փաթթված էին զանազան գույնի թուղթերու մեջ. հետաքրքրությունս գրավեց հայատու թերթիկներու գործածությունը թուրք նպարավաճառներու կողմեն. երկյուղածությամբ քացի ծրարները և կարգացի էջեր Օրմանյանի «Ազգապատում»նեն, որոնք օգտագործված էին շաքար լեցնելու համար. կիսված գունազարդ մանրանկար մը ձախ կողմի մասով տակը «Հայոց թագաւոր» մակագրությամբ: Զշարունակեցի. կանչել տվի կառտիլան Ահմետ էֆենտիկին և խնդրեցի փնտուի պանիրը գնած թուրք նպարավաճառի մուտ մանրանկարի մյուս կեսը:»

Ահմետ վերագրածավ ուշ ժամանակ կարգ մը մագաղաթյա պատառիկներ հավաքած պայուսակի մեջ և այլ հայերեն գրքերու էջեր, բայց մանրանկարը չկար:

²²⁵ Կ. Գարիկյան, Եղեռնապատում.... էջ 563: